# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

27 մարտի 2018 թվականի թիվ 34-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի ներկայացրած որոշման նախագիծը, քվեարկության արդյունքներով 12 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ Ա.
3 ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

10. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

11. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ մարտի 27
ք.Սիսիան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

# Համայնքի 2018 թվականի

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Արթուր Սարգսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018թ-ի մարտի 27-ի թիվ 34-Ն որոշմամբ

ՍԻՍԻԱՆ
2018Թ.

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................ 3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ........................................ 4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ........................................ 5
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ ........................................ 15
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ ........................................ 16
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ ........................................ 18

## Ներածություն

Սիսիանի համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Սիսիանի համայնքի տարեկան աշխատանքային պլանը կազմվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ և «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն կողմից մշակված «Համայնքի ՏԱՊ-ի մշակման մեթոդական ուղեցույց»-ի հիման վրա:

Սիսիանի համայնքի 2018թ. ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2018թ. Սիսիանի համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

2018թ. նախատեսված ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը ներկայացված են ըստ բնակավայրերի ու դրանց արժեքների:

ՏԱՊ-ում ներկայացվում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ պլանավորված գործընթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղբյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

ՏԱՊ-ի իրականացման արդյունավետությունը նախատեսվում է իրագործել ըստ մոնիթորինգի և գնահատման պլանի՝ կիսամյակային և տարեկան կտրվածքով:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

**Համայնքի տեսլականը՝**

***համայնքի բնակիչների համար բարեկեցիկ ապրելակերպ՝ կենցաղային և բնակարանային պայմաններով, փոքր և միջին արտադրական ձեռնարկությունների զարգացման համար գրավիչ գործարար միջավայրով:***

Աղյուսակ 1.Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

| Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%) | 9 | 8 |
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 33 | 34 |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ) | 30922 | 31000 |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ) | | |
| Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ) | 350/550 | 355/560 |

Աղյուսակ 2.Համայնքի ոլորտային նպատակները

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի | | |
|---|---|---|---|
| | Ցուցանիշ | Ելակետային արժեք* | Թիրախային արժեք* |
| **Ոլորտ 1. Ընդհանուր:**<br>• Ապահովել տեղական ինքնակառավարումը Միսիանի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը նպատակային օգտագործումը | Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հաշվետու, մասնակցային և ուղենշված գործունեություն, % | 70 | 75 |
| | Համայնքային գույքի արդյունավետ կառավարում, % | 60 | 75 |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն:**<br>• Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումը, շահագործումն ու զարգացումը<br>• Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը<br>• Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | Բարելավված համայնքային գույքի, ենթակառուցվածքների, հանրային վայրերի տեսակարար կշիռը % | 65 | 70 |
| | Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, % | 35 | 40 |
| | Հանրային տարածքների մաքրության աստիճանը ընդհանուր հանրային տարածքների մեջ, % | 30 | 37 |
| | Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների | 50 | 60 |

| | | | |
|---|---|---|---|
| | մեջ% | | |
| **Ոլորտ 3. Կրթություն:** Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ | Նախադպրոցական կրթության ծառայության մատչելիությունը համայնքում %<br><br>Արտադպրոցական դաստիրակության ծառայության մատչելիությունը համայնքում % | 70<br><br>60 | 85<br><br>70 |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ:**<br>• Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը<br>• Կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, %<br><br>Բնակիչների գոհունակությունը մշակութային կազմակերպությունների ծառայություններից% | 35<br><br>65 | 40<br><br>75 |
| **Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն:** Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը | Սոցիալական աջակցություն ստացող անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ % | 10 | 13 |

**Տես՝ ոլորտի վերջնական արդյունքների ցուցանիշների գնահատման սանդղակը Հավելված 1-ում:*

**2. Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)**

**Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով**

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը(հազ. դրամ) | Բնակավայրը |
|---|---|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր | | | |
| 1 | Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում | 7944.4 | Բոլոր բնակավայրերում |
| 2 | Համայնքի աշխատակազմի պահպանում | 275382.7 | Բոլոր բնակավայրերում |
| 3. | Համայնքի կենտրոնից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում, սպասարկման որակի բարելավում | 3615.0 | Սիսիան բնակավայր |
| 4. | Համայնքային հողերի կառավարում | 0.0 | Բոլոր բնակավայրերում |
| Ընդամենը | | 286942.1 | |

| | | | |
|---|---|---|---|
| Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | |
| 5. | Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում | 3138.3 | Բոլոր բնակավայրերում |
| 6. | Համայնքի ենթակառուցվածքների պահպանում | 35634.8 | Բոլոր բնակավայրերում |
| 7. | Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում | 98745.9 | Բոլոր բնակավայրերում |
| 8. | Համայնքի ենթակառուցվածքների զարգացում | 32010.0 | Սիսիան բնակավայր |
| Ընդամենը | | **169529.0** | |
| Ոլորտ 3. Կրթություն | | | |
| 11. | Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում | 229300.0 | Սիսիանի համայնքում և բնակավայրերում |
| 12. | Արտադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում | 115667.3 | Սիսիանի համայնքում |
| Ընդամենը | | **344967.3** | |
| Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | | | |
| 13. | Մշակութային կյանքի կազմակերպում համայնքում | 68285.5 | Բոլոր բնակավայրերում |
| Ընդամենը | | **68285.5** | |
| Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն | | | |
| 14. | Սոցիալական աջակցություն անապահով խմբերին | 3000.0 | Բոլոր բնակավայրերում |
| Ընդամենը | | **3000.0** | |
| Ոլորտ 6. Գյուղատնտեսություն | | | |
| **15.** | Համապարփակ աջակցություն Հայաստանի լեռնային գյուղական շրջանների կայուն տնտեսական զարգացման | **262000.0** | Շաքի, Շաղատ և Անգեղակոթ բնակավայրեր |
| **16.** | Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության 2-րդ ծրագիր | **150239.0** | Աղիտու, Լոր, Նորավան, Նժդեհ, Իշխանասար բնակավայրեր |
| | | | |
| Ընդհանուրը | | 412239.0 | |

**Աղյուսակ 4.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

| հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ.դրամ) | ԲԲՀ-ի բնակավայրը |
|---|---|---|---|
| Ոլորտ 1. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | |
| 1 | Համայնքի բարեկարգում | 69000.0 | Բոլոր բնակավայրեր |
| 2 | Կ.Դեմիրճյանի անվան այգու բարեկարգում | 120000.0 | Սիսիան |
| 3 | Մսի վաճառքի տաղավարի կառուցում | 10000.0 | Սիսիան |
| Ոլորտ 2. Կրթություն | | | |
| 4 | ՆՈՒՀ-երի վերանորոգում | 57000.0 | Սիսիան |
| Ընդհանուրը | | 256000.0 | |

Աղյուսակ 5.ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշներ | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>• ապահովել տեղական ինքնակառավարումը Սիսիանի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը | Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն, 75%<br>Համայնքային գույքի արդյունավետ կառավարում, 75% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, Մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | - |
| **Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարելավում | ՏԻՄ-երի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը, 70% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք | Աշխատակազմի քարտուղար | 1 տարի | - |
| **Միջոցառումներ.**<br>1.Համակարգչային ծառայությունների ձեռք բերում<br>2.Մասնագիտական և այլ ծառայությունների ձեռք բերում | **Ելքի ցուցանիշներ**<br>•Ծրագրային թարմացումներ - 2<br>•Հարկերի հաշվառման և հաշվարկման արդյունավետության մակարդակի բարձրացում- 15%<br>•Զափագրվող և պետական գրանցման ենթակա գույքային միավորների թիվը-60<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>•Համակարգիչների թիվը - 10<br>•Աշխատակիցների թիվը - 10<br>•Միջոցառումների իրականացման | Սիսիանի համայնքապետարան, ,,ՏՀԶՎԿ,, ՀԿ, ,,Վեկտոր պլյուս,, ՍՊԸ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ընդհանուր ծախսերը՝ 7944.4հազ. դրամ, համայնքի բյուջե | | | | |
| **Ծրագիր 2. Համայնքի աշխատակազմի պահպանում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ իրականացում համայնքում | ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 70% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Աշխատակազմի քարտուղար | 1 տարի | - |
| **Միջոցառումներ.**<br>1.Սիսիանի համայնքի աշխատակազմի և թվով 29 բնակավայրի վարչական ղեկավարի պահպանության ծախսեր | **Ելքի ցուցանիշներ**<br>•Ավագանու նիստերի թիվը - 12<br>•Վերապատրաստված աշխատակիցների թիվը - 5<br>•Բնակավայրերի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների հասանելիությունն ավելացել է 5%-ով<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>•Աշխատակիցների թիվը համայնքի կենտրոնում-54<br>•Աշխատակիցների թիվը բնակավայրերում - 65<br>•Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 275382.7 հազ. դրամ, համայնքի բյուջե | Սիսիանի համայնքապետարան | | | |
| **Ծրագիր 3. Համայնքի կենտրոնից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում, սպասարկման որակի բարելավում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>ՏԻՄ աշխատակազմի կողմից մատուցվող ծառայությունների ապահովում | ՏԻՄ-երի կողմից բնակիչներին սպասարկման արագությունը և որակը-60% | ՔՍԳ և ՔԱԿԳ հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք | Աշխատակազմի քարտուղար | 1 տարի | |
| **Միջոցառումներ.**<br>1. ՔՍԳ աշխատանքների կազմակերպում<br>2. ՔԱԿԳ ծառայության մատուցում | **Ելքի ցուցանիշներ**<br>•ՔՍԳ կողմից մատուցվող ծառայությունների թիվը –7<br>•ՔԱԿԳ ակտերի թիվը – 1245<br>•Բնակիչների բավարարվածությունը ՔՍԳ և ՔԱԿԳ ծառայություններից -80%<br>**Մուտքի ցուցանիշներ** | Սիսիանի համայնքապետարան | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | •Համակարգիչների թիվը-7<br>•Աշխատակիցների թիվը-7<br>•ՔՍ գրասենյակների թիվը-1<br>Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3615.0 հազ. դրամ, համայնքի բյուջե, ՔՍԳ-ի ծախսը աշխատակազմի պահպանման ծախսերով | | | | |
| **Ծրագիր 4. Համայնքային գույքի կառավարում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Համայնքային գույքի արդյունավետ և նպատակային կառավարում | Համայնքի գույքի կառավարումից առաջացած եկամուտների ավելացում- 5% | Աճուրդների արձանագրություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | |
| **Միջոցառումներ.**<br>Համայնքի հողատարածքների աճուրդ վաճառք համաձայն գույքի օտարման 2018թ. ծրագրի | **Ելքի ցուցանիշներ**<br>•Ակնկալվող եկամուտ – 1800.0 հազար դրամ<br>•Համայնքի գույքի կառավարման արդյունավետության աճ – 15%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>Օտարվող համայնքային հողեր, քմ - 3380 | Սիսիանի համայնքապետարան | | | |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակներ.**<br>• կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը<br>• ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական | Բարելավված համայնքային գույքի, ենթակառուցվածքների, հանրային վայրերի տեսակարար կշիռը 70%<br><br>Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, 40%<br><br>Հանրային տարածքների մաքրության աստիճանը ընդհանուր հանրային տարածքների մեջ, 37%<br><br>Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ 60% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, Մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ներգործության նվազեցումն ու չեզոքացումը<br>• ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | | | | | |
| **Ծրագիր 1.Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Պահպանել և բարեկարգել համայնքի հանրային և կանաչապատ հատվածները | Բարեկարգ և կանաչապատ հանրային հատվածների ընդլայնում, 10% | Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 տարի | - |
| **Միջոցառումներ.**<br>1. Համայնքի բնակավայրերում շենքերի, շինությունների, մայթերի, ճամփեզրերի ընթացիկ նորոգում և պահպանում<br>2. Հանրային կանաչապատ տարածքների պահպանում և ընդլայնում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Համայնքային շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում-2000 քմ<br>• Կանաչ տարածքների ընդլայնում -10%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը -10<br>• Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3138.3 հազ. դրամ | Սիսիանի համայնքապետարան | | | |
| **Ծրագիր 2. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Համայնքային ենթակառուցվածքների զարգացում | • Լուսավորության համակարգի պահպանման շնորհիվ երթևեկության անվտանգության աճ - 10% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | - |
| **Միջոցառումներ.**<br>1.Փողոցային լուսավորության ցանցի սպասարկում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Լուսավորվող փողոցների քանակը – 72<br>• Բնակիչների բավարարվածությունը 75%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակից – 3 մարդ<br>• Տրանսպորտային միջոց -1 միավոր<br>• Միջոցառումների իրականացման | Սիսիանի համայնքապետարան | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ընդհանուր ծախսերը՝ 27562.8 հազ. դրամ, համայնքի բյուջե | | | | |
| **Ծրագիր 3. Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Մաքուր համայնք բնակիչների համար | Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, 40% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | «Սիսիանի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն | 1 տարի | - |
| **Միջոցառումներ.**<br>1. Աղբատար մեքենաների և աղբամանների ձեռքբերում<br>2. «Սիսիանի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ -ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում՝ աղբահանություն<br>3. Սանիտարական մաքրում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Աղբատար մեքենա-2<br>• Աղբամաններ-133<br>• Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը -9300<br>• Աղբամանների ախտահանում – ամսական 1 անգամ<br>• Աղբահանության ծառայության որակի բարելավում- 15%<br>• Համայնքի սանմաքրման ապահովում- 70%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 65<br>• Տեխնիկական միջոցներ - 3<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 98745.9 հազ. դրամ, | «Սիսիանի համայնքային կոմունալ տնտեսություն, բարեկարգում» ՀՈԱԿ | | | |
| **Ոլորտ 3. Կրթություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ | Նախադպրոցական կրթության և դաստիրակության ծառայության մատչելիությունը համայնքում 85%<br><br>Արտադպրոցական կրթության | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և | Համայնքի ղեկավար | 1 տարի | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ծառայության մատչելիությունը համայնքում 70% | գնահատման արդյունքներ | | | |
| **Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.** Նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպում | Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ 85% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Սիսիանի համայնքի ՆՈՒՀ-երի տնօրեններ | 1 տարի | - |
| **Միջոցառումներ.**<br>1.Սիսիանի համայնքի ՆՈՒՀ-երի պահպանում /ներառյալ գյուղական բնակավայրերի/<br>2. Կրթական և դաստիարակչական ուսուցման բարելավում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 826<br>• Սննդի ապահովումը օրվա ընթացքում – 3 անգամ<br>• Կրթական և դաստիարակչական բաղադրիչը մատուցվող ծառայության մեջ – 70%<br>• Նախակրթարանի վերանորոգված խմբասենյակներ-2<br><br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը – 172<br>• ՀՈԱԿ-ների թիվը - 4<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 229300.0 հազ. դրամ, համայնքի բյուջե | Սիսիանի համայնքի ՆՈՒՀ-եր | | | |
| **Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում համայնքում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.** Արտադպրոցական որակյալ դաստիարակության կազմակերպում | Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների թվի ավելացում 10% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Սիսիանի համայնքի արտադպրոցական հաստատությունների տնօրեններ | 1 տարի | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Միջոցառումներ**<br>1. Երաժշտական կրթության ապահովում <<Է.Այյանի անվան երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի,<br>2. պարի ուսուցման ապահովում «Սիսիանի համայնքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի,<br>3. շախմատի ուսուցում <<Շախմատի դպրոց>> ՀՈԱԿ-ի,<br>4. Նկարչության,քանդակագործության ուսուցման ապահովում <<Զ.Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց>> միջոցով<br>5. Ֆուտբոլի ուսուցման ապահովում <<Սիսիանի ֆուտբոլի դպրոց>> ՀՈԱԿ-ի միջոցով | **Ելքի ցուցանիշներ**<br>• Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 620<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Աշխատակիցների թիվը – 84<br>• ՀՈԱԿ-ների թիվը-6<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 115667.3.0 հազ. դրամ, համայնքի բյուջե | «Սիսիանի համայնքի արտադպրոցական հաստատությունների տնօրեններ | | | |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>• կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը<br>• կազմակերպել համայնքի մշակութային կազմակերպությունների աշխատանքը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը, 40%<br><br>Բնակիչների գոհունակությունը մշակութային կազմակերպությունների ծառայություններից 60% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար, | 1 տարի | - |
| **Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը | Մշակութային միջոցառումների ավելացում 20% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Մշակույթի ոլորտի կազմակերպիչ | 1 տարի | - |
| **Միջոցառումներ** | **Ելքի ցուցանիշներ** | Սիսիանի | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.Ապահովել համայնքում մշակութային կյանքի կազմակերպումը, հոգալ տոնական միջոցառումների հավուր պատշաճի իրականացումը<br>2. Ապահովել գրադարանային ծառայության, երգի, ամունքի, սպորտային ծառայությունների մատուցումը | • Մշակութային միջոցառումների թիվը – 68<br>• Միջոցառումներին մասնակիցների թիվը – 5000<br>• Մշակութային կյանքի ակտիվացում- 20%<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը – 8<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 68285.5 հազ. դրամ, համայնքի բյուջե | համայնքապետարան | | | |
| **Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն** | | | | | |
| **Ոլորտի նպատակ.**<br>Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը | Սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, 30% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | - |
| **Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.**<br>Ապահովել սոցիալական աջակցության նպատակային և թիրախային իրագործումը | Համայնքում սոցիալապես անապահով խմբերի, կարիքավոր ընտանիքների վիճակի բարելավում, 5% | Համայնքի ղեկավարի հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ | Համայնքի ղեկավար | 1 տարի | - |
| **Միջոցառումներ**<br>1. Դրամական օգնությունների կազմակերպում | **Ելքի ցուցանիշներ**<br>• Աջակցություն ստացած սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող բնակիչների թիվը -100<br>**Մուտքի ցուցանիշներ**<br>• Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 3000.0 հազ. դրամ, համայնքի բյուջե | Սիսիանի համայնքապետարան | | | |
| **Ընդամենը** | **872724.0** | | | | |

### 3. Համայնքային գույքի կառավարման 2018թ.ծրագիրը

Աղյուսակ 6. Համայնքի գույքի կառավարման 2018թ. ծրագիրը

| Հ/հ | Գույքի անվանումը | Հասցեն կամ ծածկագիրը | Զբաղեցրած տարածքը/ մակերեսը ($մ^2$) | Վիճակի գնահատումը | Գույքի կառավարման գործառույթը | Այլ բնութագրիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0036-0010 | 400 | պարապուրդ | օտարել | |
| 2 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0227-0044 | 600 | պարապուրդ | օտարել | |
| 3 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0246-0015 | 300 | պարապուրդ | օտարել | |
| 4 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0094-0223 | 100 | պարապուրդ | օտարել | |
| 5 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0239-0234 | 33 | պարապուրդ | օտարել | |
| 6 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0240-0020 | 250 | պարապուրդ | օտարել | |
| 7 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0239-0224 | 700 | պարապուրդ | օտարել | |
| 8 | գյուղարտադրական նշանակության | 09-006-0106-0050 | 1000 | պարապուրդ | օտարել | |
| 9 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0094-0249 | 20 | պարապուրդ | վարձակալություն | |
| 10 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0239-0235 | 20 | պարապուրդ | վարձակալություն | |
| 11 | բնակավայրերի բնակելի կառուցապատման | 09-006-0109-0019 | 20 | պարապուրդ | վարձակալություն | |
| 12 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0224-0187 | 60 | պարապուրդ | վարձակալություն | |
| 13 | բնակավայրերի հասարակական կառուցապատման | 09-006-0249-0154 | 135 | պարապուրդ | վարձակալություն | |

## 4. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը

Աղյուսակ 7. ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Համայնքի բյուջե | Պետական բյուջե | Դոնոր կազմակերպություններ | Համայնք-ՔՀ-ՄՀ համագործակցություն | Այլ աղբյուրներ |
| Ոլորտ 1. Ընդհանուր | | | | | | | |
| 1 | Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում | 7944.4 | 7944.4 | | | | |
| 2 | Համայնքի աշխատակազմի պահպանում | 275382.7 | 275382.7 | | | | |
| 3. | Համայնքի կենտրոնից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում, սպասարկման որակի բարելավում | 3615.0 | 3615.0 | | | | |
| 4. | Համայնքային հողերի կառավարում | 0.0 | 0.0 | | | | |
| | **Ընդամենը** | **286942.1** | **286942.1** | | | | |
| Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | | | | | |
| 5. | Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում | 3138.3 | 3138.3 | | | | |
| 6. | Համայնքի ենթակառուցվածքների, պահպանում | 35634.8 | 35634.8 | | | | |
| 7. | Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում | 98745.9 | 98745.9 | | | | |
| 8. | Համայնքի ենթակառուցվածքների զարգացում | 32010.0 | 32010.0 | | | | |
| | **Ընդամենը** | **169529.0** | **169529.0** | | | | |
| Ոլորտ3. Կրթություն | | | | | | | |
| 9. | Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում | 229300.0 | 229300.0 | | | | |
| 10. | Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում համայնքում | 115667.3 | 115667.3 | | | | |
| | **Ընդամենը** | **344967.3** | **344967.3** | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ոլորտ5. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | | | | | |
| 11. | Մշակութային կյանքի կազմակերպում համայնքում | 68285.5 | 68285.5 | | | | |
| | **Ընդամենը** | **68285.5** | **68285.5** | | | | |
| **Ոլորտ 6. Սոցիալական պաշտպանություն** | | | | | | | |
| 12. | Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին | 3000.0 | 3000.0 | | | | |
| | **Ընդամենը** | **3000.0** | **3000.0** | | | | |
| **Ընդհանուրը** | | **872724.0** | **872724.0** | | | | |

## 5. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Աղյուսակ 8.Համայնքի ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը

| Ոլորտ 1. Ընդհանուր | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Համակարգիչների թիվը<br>•Աշխատակիցների թիվը | 7<br>7 | | | |
| Ելքային (քանակական) | •Ծրագրային թարմացումներ<br>•Հարկերի հաշվառման և հաշվարկման արդյունավետության մակարդակի բարձրացում % | 2<br>15 | | | |
| Ելքային (որակական) | Կառավարման արդյունավետության բարելավում % | 5 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետ | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | ՏԻՄ-երի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը % | 70 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | 7944.4 | | | |
| Ծրագիր 2. Համայնքի աշխատակազմի պահպանում | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Աշխատակիցների թիվը համայնքի կենտրոնում | 54 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | •Աշխատակիցների թիվը բնակավայրերում<br>•Համայնքի կենտրոն բնակավայրի աշխ. պահպանման և բնակավայրերում վարչական ղեկավարի պահպանման ծախսեր-հազ. դր | 65<br><br>275382.7 | | | |
| Ելքային (քանակական) | •Ավագանու նիստերի թիվը<br>•Վերապատրաստված աշխատակիցների թիվը | 12<br><br>5 | | | |
| Ելքային (որակական) | Բնակավայրերի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների հասանելիությունն ավելացել է % | 5 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետ | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | •ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, % | 70 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | **275382.7** | | | |
| **Ծրագիր 3. Համայնքի կենտրոնից մատուցվող ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում, սպասարկման որակի բարելավում** | | | | | |
| **Արդյունքային ցուցանիշները** | | **2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան** | | | |
| **Տեսակը** | **Անվանումը** | **Թիրախ. արժեքը** | **Փաստ. արժեքը** | **Շեղումը** | **Մեկնաբանություն** |
| Մուտքային | •Համակարգիչների թիվը<br>•Աշխատակիցների թիվը<br>•ՔՍ գրասենյակների թիվը | 7<br>7<br>1 | | | |
| Ելքային (քանակական) | •ՔՍԳ կողմից մատուցվող ծառայությունների թիվը | 10 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | •ՔԱԿԳ ակտերի թիվը | 1245 | | | |
| Ելքային (որակական) | •Բնակիչների բավարարվածությունը ՔՍԳ և ՔԱԿԳ ծառայություններից % | 80 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետ | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | ՏԻՄ-երի կողմից բնակիչներին սպասարկման արագությունը և որակը% | 60 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | **3561.4** | | | |
| **Ծրագիր 4. Համայնքային գույքի կառավարում** | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Օտարվող համայնքային հողեր-քմ | 3800 | | | |
| Ելքային (քանակական) | •Ակնկալվող եկամուտ - դրամ | 1800.0 | | | |
| Ելքային (որակական) | Համայնքի գույքի կառավարման արդյունավերության աճ % | 15 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետ | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | •Համայնքի գույքի կառավարումից առաջացած եկամուտների ավելացում % | 5 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | **0.0** | | | |
| Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | | | |
| Ծրագիր 1.Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մուտքային | •Աշխատակիցների-թիվը<br>•Տեխնիկական միջոցներ -միավոր | 8<br>2 | | | |
| Ելքային (քանակական) | •Համայնքային շենքների և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում- քմ | 2000 | | | |
| Ելքային (որակական) | Բնակիչների գոհունակությունը հանրային հատվածների մաքրությունից և խնամված կանաչապատ հատվածներից% | 75 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետը | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | •Բարեկարգ և կանաչապատ հանրային հատվածների ընդլանում, % | 10 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | **3138.3** | | | |

| Ծրագիր 2. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Աշխատակից մարդ<br>•Տրանսպորտային միջոց - միավոր | 3<br>1 | | | |
| Ելքային (քանակական) | •Լուսավորվող փողոցների քանակը<br>•Լուսավորության շնորհիվ ճանապարհային վթարների նվազում % | 72<br>5 | | | |
| Ելքային (որակական) | Բնակիչների բավարարվածությունը% | 75 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետը | 1 տարի | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Վերջնական արդյունքի | •Լուսավորության համակարգի պահպանման շնորհիվ երթևեկության անվտանգության աճ - % | 5 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | **27562.8** | | | |
| Ծրագիր 3 Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը<br>•Տեխնիկական միջոցներ | 20<br>3 | | | |
| Ելքային (քանակական) | •Աղբատար մեքենաների թիվը<br>•Աղբամանների թիվը<br>•Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը -<br>•Աղբամանների ախտահանում – ամսական /անգամ | 2<br>161<br>9309<br>1 | | | |
| Ելքային (որակական) | Աղբահանության ծառայության որակի բարելավում, % | 15 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Աղբահանության նվազագույն հաճախականությունը /շաբաթական/ | 1 անգամ | | | |
| Վերջնական արդյունքի | Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, % | 40 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | **98745.9** | | | |

Ոլորտ 3. Կրթություն

| Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ապահովում համայնքում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Աշխատակիցների թիվը<br>•ՀՈԱԿ-ների թիվը | 172<br>4 | | | |
| Ելքային (քանակական) | •Ծառայությունից օգտվող երեխաների թիվը<br>•Սննդի ապահովումը օրվա ընթացքում անգամ | 826<br>3 | | | |
| Ելքային (որակական) | Կրթական և դաստիրակչական բաղադրիչը մատուցվող ծառայության մեջ% | 70 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետը | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից օգտվողների տեսակարար կշիռը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ % | 85 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | 229300.0 | | | |

| Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիրակության ծառայության մատուցում համայնքում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Աշխատակիցների թիվը<br>•ՀՈԱԿ-ների թիվը | 84<br>6 | | | |
| Ելքային (քանակական) | •Ծառայությունից օգտվող երեխաների թիվը<br>•Դասարանների թիվը | 620<br>54 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ելքային (որակական) | Մատուցվող արտադպրոցական կրթության ծառայության որակի բարելավում % | 15 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետը | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների թվի ավելացում % | 10 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | 115667.3 | | | |

| Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախ. արժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | •Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը | 8 | | | |
| Ելքային (քանակական) | •Մշակութային միջոցառումների թիվը<br>•Միջոցառումներին մասնակիցների թիվը<br>•Խմբակներ հաճախողների թիվը | 68<br>5000 | | | |
| Ելքային (որակական) | Մշակութային կյանքի ակտիվացում և որակի բարելավում% | 20 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետը | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | Մշակութային միջոցառումների ավելացում % | 20 | | | |
| Ծախսեր, հազ. | | 68285.5 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| դրամ | | | | | |
| Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն | | | | | |
| Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2018 թ., 1-ին կիսամյակ/տարեկան | | | |
| Տեսակը | Անվանումը | Թիրախարժեքը | Փաստ. արժեքը | Շեղումը | Մեկնաբանություն |
| Մուտքային | | | | | |
| Ելքային (քանակական) | Համայնքի սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող աջակցություն ստացած բնակիչներ | 100 | | | |
| Ելքային (որակական) | Համայնքում սոցիալապես անապահով խմբերի, կարիքավոր ընտանիքների վիճակի բարելավում, % | 3 | | | |
| Ելքային (ժամկետայնության) | Ծրագրի իրագործման ժամկետը | 1 տարի | | | |
| Վերջնական արդյունքի | Սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, % | 13 | | | |
| Ծախսեր, հազ. դրամ | | 3000.0 | | | |

### Հավելված 1. Վերջնական արդյունքների և որակական ցուցանիշների գնահատման սանդղակ

| *Ծանոթություն* | *Ցուցանիշ* | *Վերջնական արդյունքի ցուցանիշի գնահատումը %* | *Գնահատման սանդղակ* | *Թիրախային վերջնական արդյունքների գնահատման չափորոշիչ Հիմքը ՄԳՀ* |
|---|---|---|---|---|
| **Ոլորտի վերջնական արդյունքի ցուցանիշների գնահատման բանաձև Բ/Ա**<br>Ա. Տվյալ ոլորտում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքի ղեկավարի լիազորությունների, ծառայությունների և գործառույթներիհամբող ջական իրականացում, սահմանված տեսլականի ապահովում (100%)<br>Բ. ՏԱՊ-ով սահմանված ոլորտային նպատակների ամբողջական իրականացում | Ոլորտի վերջնական արդյունքի ցուցանիշ | 91 - 100 % | Շատ լավ | Ոլորտում նախատեսված բոլոր ծրագրերը կատարվել են, ծրագրերի նպատակների համար սահմանված վերջնական արդյունքի ցուցանիշները ապահովվել են, կան ոչ էական շեղումներ պլանավորված արդյունքներից |
| | | 71 - 90 % | Լավ | Ոլորտում նախատեսված ծրագրերի 70-90% կատարվել են, ծրագրերի նպատակների համար սահմանված վերջնական արդյունքի ցուցանիշները ապահովվել են մասնակի, առկա են ՏԱՊ-ով նախատեսված ռիսկերը |
| | | 41-70 % | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | Ոլորտում նախատեսված ծրագրերի 40-70% կատարվել են, ծրագրերի նպատակների համար սահմանված վերջնական արդյունքի ցուցանիշներում առկա են էական շեղումներ |
| | | 21 - 40 % | Ավելի շատ վատ, քան լավ | Ոլորտում նախատեսված ծրագրերի 20-40% կատարվել են, ծրագրերի նպատակների համար սահմանված վերջնական արդյունքի ցուցանիշները չեն ապահովվել կամ ապահովվել են լուրջ բացթողումներով |
| | | 0-20% | Վատ | Ոլորտում նախատեսված ծրագրերը հիմնականում չեն կատարվել, ծրագրերի նպատակների համար սահմանված վերջնական արդյունքի ցուցանիշները ապահովված չեն |
| Օրինակ՝Կրթության ոլորտի ծառայության որակը - 70% | | | | |
| *Ոլորտի վերջնական արդյունքի ցուցանիշներում օգտագործված որակական աճ, բարելավում արտահայտող ցուցանիշը = թիրախային ցուցանիշ - ելակետային ցուցանիշ* | | | | |
| **Ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշների գնահատման բանաձև Դ/Գ**<br>Գ. Տվյալ ոլորտում ՀՀԶԾ տեսլականին հասնելու համար նախատեսված ծրագրերի ամբողջական իրականացում (100%)<br>Դ. ՏԱՊ-ով սահմանված ծրագրային նպատակների | Ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշ | 91 - 100 % | Շատ լավ | Ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են, միջոցառումների համար սահմանված ելքային ցուցանիշները ապահովվել են, մուտքային ցուցանիշներում կան ոչ էական շեղումներ |
| | | 71 - 90 % | Լավ | Ծրագրով նախատեսված միջոցառումները կատարվել են, միջոցառումների համար սահմանված ելքային ցուցանիշների 70-90% ապահովվել են, մուտքային ցուցանիշներում կան էական շեղումներ |
| | | 41-70 % | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | Ծրագրով նախատեսված միջոցառումները կատարվել են մասնակի, միջոցառումների համար սահմանված ելքային ցուցանիշների 40-70% ապահովվել են, մուտքային ցուցանիշներում կան էական շեղումներ |
| | | 21 - 40 % | Ավելի շատ վատ, քան լավ | Ծրագրով նախատեսված միջոցառումները կատարվել են մասնակի, միջոցառումների համար սահմանված ելքային ցուցանիշների 20 40% ապահովվել են, մուտքային ցուցանիշներում կան լուրջ բացթողումներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ամբողջական իրականացում | | 0-20% | Վատ | Ծրագրով նախատեսված միջոցառումները հիմնականում չեն կատարվել, միջոցառումների համար սահմանված ելքային և մուտքային ցուցանիշները չեն ապահովվել |

Օրինակ՝ ՏԻՄ-երի կողմից բնակիչներին սպասարկման արագությունը և որակը-60%

| Ծառայությունների որակի գնահատման չափորոշիչ | Որակական ցուցանիշի գնահատումը, % | Բնակիչների գնահատականը ծառայության որակին | ***Ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշի փոփոխության (աճի, բարելավման) գնահատման սանդղակ***<br>***<u>Աճի ցուցանիշը = թիրախային ցուցանիշի հարաբերությունը ելակետային ցուցանիշին՝ արտահայտված տոկոսով:</u>*** |
|---|---|---|---|
| | 91 - 100 % | Շատ լավ | Ոլորտում ներառված են ծրագրեր, որոնք նախորդ տարում չեն իրականացվել, նախատեսվում են նոր ծառայություններ, միջոցառումներ և ելքային ցուցանիշներ, որոնք ապահովում են ոլորտի զարգացումը: |
| | 71 - 90 % | Լավ | Ոլորտում ներառված են ծրագրեր, որոնք նախորդ տարում ևս իրականացվել են, սակայն նախատեսվում են նոր միջոցառումներ, որոնց ելքային ցուցանիշները նպաստում են ծառայությունների որակը նախորդ տարվա համեմատ էապես բարելավելու համար: |
| | 41-70 % | Միջին՝ ոչ լավ ոչ վատ | Ոլորտում ներառված ծրագրերը իրականացվել են նախորդ տարիներին ևս, նախատեսվում են միջոցառումներ, որոնք հիմնականում ուղղված են պահպանելու մատուցվող ծառայությունների որակը, ելքային ցուցանիշները փոքր դրական աճի միտում են պարունակում նախորդ տարվա համեմատ |
| | 0 - 40 % | Ավելի շատ վատ, քան լավ | Ոլորտում ներառված ծրագրերը, միջոցառումները իրականացվել են նախորդ տարիներին ևս, որոնք ուղղված են պահպանելումատուցվողծառայություններիորակը, ելքայինցուցանիշներըկրկնումեննախորդտարվացուցանիշները |
| | 0-20% | Վատ | Ոլորտումներառվածծրագրերը, միջոցառումներըիրականացվելեննախորդտարիներինևս, ելքայինցուցանիշներըավելի ցածր են քաննախորդտարվացուցանիշները |

Օրինակ՝Նախադպրոցական կրթության ծառայության որակը 85 %

Օրինակ՝ Կառավարման արդյունավետության բարելավում - 5%

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

27 մարտի 2018 թվականի թիվ 35-Ա

## ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ԵՎ ԱՇՆԱՆԸ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄ ՈՒ ԷՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 12 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Շրջակա միջավայրի պահպանությունը կազմակերպելու նպատակով 2018 թվականի գարնանը և աշնանը Սիսիան քաղաքում իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող ծառերի հատում և էտ (համաձայն հավելվածի) ու առաջացած վառելափայտը տրամադրել համայնքային ենթակայության կազմակերպություններին և կարիքավոր ընտանիքներին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -12 Դեմ 0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

10. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

11. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

/Համայնքի ղեկավար/ Ա. Սարգսյան

2018թ մարտի 27
ք.Սիսիան

*Հավելված*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի
ավագանու 2018թ մարտի 27-ի
թիվ 35-Ա որոշման

**Ց Ու Ց Ա Կ**

*2018 թվականի գարնանը և աշնանը համայնքային սեփականություն հանդիսացող ծառերի հատման և էտի*

| N | Փողոցների անվանումը | Հատվող ծառերի քանակը (հատ) | Էտվող ծառերի քանակը |
|---|---|---|---|
| 1 | Գարեգին Նժդեհի փողոցին կից | | 2 |
| 2 | Հ.Ազոյան փողոց | | 10 |
| 3 | Խանջյան փողոցի 1, 3, 5, 7 շենքերի բակային մաս | 20 | |
| 4 | Շիրվանզադե փողոցի հարակից տարածք | 3 | |
| 5 | Հիդրոշինարարների այգի | 2 | 35 |
| 6 | Թիվ 2 հիմնական դպրոցի հարևանությամբ | | 13 |
| 7 | Նար-Դոս փողոցի թիվ 5 շենքի հարևանությամբ | 2 | |
| 8 | Թիվ 5 հիմնական դպրոցի տարածքում | 2 | |
| 9 | Չարենցի փողոց /հիվանդանոցի ճանապարհին կից/ | 7 | |
| 10 | Եկեղեցու հարևանությամբ գտնվող գերեզմանոցի աղբյուրի մոտ | 8 | 4 |
| 11 | Իսրայելյան փողոց /Ռիկո սուպերմարկետի դիմաց/ | | 1 |
| | ***Ընդամենը*** | **44** | **65** |

**Աշխատակազմի քարտուղար** **Վ. Միրաքյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

27 մարտի 2018 թվականի թիվ 36-Ա

## «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆՈՒՀ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 12 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Համաձայնություն տալ «Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածու Արուս Խիկարի Գասպարյանի նշանակմանը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -12 Դեմ 0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

10. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

11. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան**

2018թ. մարտի 27
ք Սիսիան